






**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**2016 ԹՎԱԿԱՆ**

**«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության հայտարարությունը**

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Կազմակերպության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

<b>Հրայր Թոխմախյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.06.2017</u> (ամսաթիվ)
<b>Անուշ Պետրոսյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.06.17</u> (ամսաթիվ)
<b>Արտակ Միքայելյան</b> (անուն, ազգանուն)	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>28.06.2017</u> (ամսաթիվ)



**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ**

**ՖԻՆՔԱ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՓԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2016 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

## Ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013թ-ից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Կազմակերպությունն ունի 37 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

## Էական իրադարձություններ և փաստեր

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցի հրապարակման օրը Կազմակերպության գործունեությունում տեղի են ունեցել հետևյալ նշանակալի իրադարձությունները.

- Սկսած 2016 թվականի սկզբից Կազմակերպությունը դադարեցրել է «խմբային վարկատեսակների» տրամադրումը: Այս վարկերը տրամադրվում էին միայն անհատների խմբերին, որոնք համաձայնում էին իրավական պարտավորություն ստանձնել այլ գործընկերների անվճարունակության դեպքում, եթե նման անհրաժեշտություն առաջանար: Փոխարենը Կազմակերպությունն իր հաճախորդներին առաջարկում է անհատական

բիզնես և գյուղատնտեսական վարկեր, որոնք, համաձայն հաճախորդների շրջանում կատարված հարցումների արդյունքների, ավելի նախընտրելի են հաճախորդների համար:

- 2016 թվականի մարտ ամսին Հայաստանի գյուղատնտեսության վարկավորման ծրագրի շրջանակներում (FASA) Կազմակերպությունը գործարկել է գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորման նորարարական մոտեցում: Առաջին անգամ Հայաստանում վարկավորման գործընթացը իրականացվում է արժեշղթայի ֆինանսավորման մեթոդի միջոցով: Այս նպատակով Կազմակերպությունը մշակել է նոր՝ «Բերրի» վարկատեսակը՝ նախատեսված գյուղատնտեսությամբ զբաղվող այն անձանց համար, ում ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ սերմերի, պարարտանյութերի, փոքր գյուղատնտեսական սարքավորումների և այլ անհրաժեշտ միջոցների ձեռք բերման համար: Ի տարբերություն ավանդական վարկավորման, ֆինանսավորման այս մեթոդը ենթադրում է եռակողմ համագործակցություն, որի պարագայում Կազմակերպությունը հաճախորդի վարկը՝ ձեռք բերվող գյուղատնտեսական ապրանքների արժեքի չափով, անմիջապես փոխանցում է գյուղատնտեսական միջոցներ վաճառող կազմակերպությանը:
- 2016 թվականից Կազմակերպությունը սկսել է համագործակցել մի քանի վճարային համակարգերի հետ (Telcell, EasyPay, Idram, MobiDram), որոնց միջոցով ընդունում է Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի մարումներ հաճախորդներից:
- 2016 թվականից սկսած Կազմակերպությունը տրամադրում է սպառողական վարկեր իր հաճախորդներին:
- «Գելլափ Ինթերնեյշնլ»-ի հայկական ներկայացուցչության անցկացրած հարցման արդյունքներով Կազմակերպությունը 2016 թվականին 4-րդ անգամ ճանաչվել է «Հայաստանում լավագույն վարկային կազմակերպություն»:
- ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016 թ. դեկտեմբերի 30-ի թիվ N 1/970Ա որոշմամբ գրանցվել է Կազմակերպության անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը: Ազդագրով գրանցված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 4,900,000 հազար դրամ (10,125,222 ԱՄՆ դոլար):
- 2017 թվականի փետրվարի 22-ին Կազմակերպությունը թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 4,000,000 ԱՄՆ դոլարի չափով պարտատոմսերի առաջին տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 7.5% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում:
- 2017 թվականի ապրիլի 27-ին Կազմակերպությունը թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 1,500,000 հազար դրամի չափով պարտատոմսերի երկրորդ տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 12.75% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում:
- 2017 մարտի 13-ին Կազմակերպության կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առաջին տրանշը և 2017 թվականի

մայիսի 12-ին՝ երկրորդ տրանշը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔԱ Արմենիա» ֆոնդային բորսայում և ընդգրկվել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: Ցուցակման գործընթացը հնարավորություն է տալիս սկսելու պարտատոմսերի շրջանառությունը բորսայում, ինչպես նաև ցուցակման պահից թույլատրվել են նշված պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը: Կազմակերպության կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ է շնորհվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին: Շուկա ստեղծողի կարգավիճակում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ -ը կապահովի պարտատոմսերի անընդհատ երկկողմանի գնանշումներ՝ երաշխավորելով երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունը և ներդրողների համար ստեղծելով ցանկացած պահին դրանք վաճառելու կամ գնելու հնարավորություն:

Նշված հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել Կազմակերպության 2016 թվականի ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը:

#### Փաստեր, ցուցանիշներ


-6.4 %	2016 թվականի վերջին ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 29,277,311 հազ. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ նվազել է 6.4 %-ով:
-7.9 %	2016 թվականի վերջին հաճախորդներին տրված վարկերի մեծությունը կազմել է 26,015,468 հազ. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ նվազել է 7.9 %-ով:
-10.5 %	2016 թվականի վերջին Կազմակերպության ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 22,723,030 հազ. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ նվազել է 10.5 %-ով:
+12 անգամ	2016 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 592,089 հազ. ՀՀ դրամ, որը 2015 թվականին կազմել է ընդամենը 45,063 հազ. ՀՀ դրամ:
+11.1 %	2016 թվականի վերջին Կազմակերպության ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 6,554,281 հազ. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 11.1 %-ով:

2016 թվականին Կազմակերպությունը կատարելով մի շարք ռազմավարական փոփոխություններ ապահովել է շահութաբերության մակարդակի աճ, ինչպես նաև գործունեության արդյունավետությունը բնութագրող որոշ ցուցանիշների բարելավում:

## Ակտիվներ

Կազմակերպության ընդհանուր ակտիվները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 29,277,311 հազ. ՀՀ դրամ՝ 2015թ. նույն ժամանակահատվածի (31,293,894 հազ. ՀՀ դրամ) համեմատ նվազելով 2,016,583 հազ. ՀՀ դրամով կամ 6.4%-ով: Հաշվետու տարում Կազմակերպության ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված էր հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ, ինչը մանրամասն նկարագրված է հաջորդ բաժնում:


Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են նախորդ յոթ տարիների ընթացքում արձանագրված ակտիվների փոփոխությունը և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների կառուցվածքը:



### Գծապատկեր 1



## Ակտիվների կառուցվածքը հաշվետու տարվա վերջին



## Գծապատկեր 2

### Վարկեր


2016 թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 26,015,468 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 7.9%-ով կամ 2,225,078 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդների տրված վարկերի նվազումը պայմանավորված էր հետևյալ գործոններով՝

- բանկային համակարգում հավելյալ լիկվիդային միջոցների առկայությամբ պայմանավորված մրցակցության բարձրացում տեղական բանկերի կողմից, որոնք ակտիվորեն սկսեցին տրամադրել միկրոֆինանսական վարկեր,
- խմբային վարկերի տրամադրման դադարեցում, ինչը նպատակ ուներ բարելավել վարկային պորտֆելի որակը և բարեխիղճ հաճախորդներին տեղափոխել անհատական վարկավորման ոլորտ:


Նախորդ ֆինանսական տարվա համեմատ 2016թ.-ին ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 2.4%-ով կամ 455,561 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 19,399,201 հազ. ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը նվազել է 26.3%-ով կամ 2,241,154 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 6,290,479 հազ. ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալն նվազել է 25.1%-ով կամ 308,240 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 917,777 հազ. ՀՀ դրամ:

Վերջին յոթ տարիների ընթացքում վարկային պորտֆելի փոփոխման դինամիկան պատկերված է ստորև բերված գծապատկերում.




**Գծապատկեր 3**

2016թ. վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների ներկայացվում է ստորև.



**Գծապատկեր 4**

2016թ. վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ տնտեսության ոլորտների ներկայացվում է ստորև.



**Գծապատկեր 5**

### **Միջազգային վարկային համագործակցություններ**

Կազմակերպության ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2016 թվականի ընթացքում Կազմակերպությունը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, Կազմակերպությունը կնքեց 17.5 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնց թվում են BlueOrchard-ը, Developing World Markets-ը, responsAbility Investments AG-ն, MHB-BANK-ը, BANK IM BISTUM ESSEN eG-ն:

Կազմակերպության և «Գերմանահայկական հիմնադրամի» միջև 2015 թվականի վերջին «ՀՀ Գյուղատնտեսության Ոլորտի Աջակցում, Երկրորդ Փուլ» ծրագրով կնքված պայմանագրի շրջանակներում 2016 թվականին մեկնարկվեց գյուղատնտեսության ոլորտի աջակցմանն ուղղված ենթավարկերի տրամադրումը Կազմակերպության կողմից և դրանց վերաֆինանսավորումը Վերականգնման վարկային հաստատության (KfW) կողմից: 2016 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից տրամադրվել և Վերականգնման վարկային հաստատության (KfW) կողմից վերաֆինանսավորվել են 217,796 հազ. ՀՀ դրամ ընդհանուր ծավալով վարկեր:

2016 թվականին Կազմակերպության հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ/EBRD), Black Sea Trade and Development Bank-ը (BSTDB),

Symbiotics-ը, Oikocredit-ը, Deutsche Bank-ը, International Finance Corporation-ը, Triple Jump-ը:


### Պարտավորություններ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները կազմել են 22,723,030 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 10.5%-ով կամ 2,671,679 հազ. ՀՀ դրամով: Հաշվետու տարում Կազմակերպության պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված էր փոխառու միջոցների 7% կամ 1,677,187 հազ. ՀՀ դրամի չափով նվազմամբ, ինչպես նաև 1,231,024 հազ. ՀՀ դրամի չափով ստորադաս փոխառության ամբողջական մարմամբ:

Տարեվերջին Կազմակերպության կողմից օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 18,869,825 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 83%-ը, ինչը փաստում է, որ Կազմակերպության համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների 5.3%-ը կազմում են հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունները 1,196,795 հազ. ՀՀ դրամի չափով, որոնց գծով որպես գրավ տրվել են ՀՀ պետական պարտքային արժեթղթեր 1,268,240 հազար դրամի չափով:

Կազմակերպության ընդհանուր պարտավորությունների դինամիկան վերջին յոթ տարիների ընթացքում պատկերված է ստորև:




### Գծապատկեր 6

## Սեփական կապիտալ

Հաշվետու ֆինանսական տարվա վերջի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 6,554,281 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 655,096 հազ. ՀՀ դրամով կամ 11,1%-ով: Սեփական կապիտալի աճը պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում ձևավորված շահույթի և Վերագնահատման պահուստների աճով:

Ստորև բերված գծապատկերում արտացոլված է սեփական կապիտալի փոփոխությունն ըստ տարիների:



## Գծապատկեր 7

### Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 8,845,784 հազ. ՀՀ դրամ՝ աճելով 9.3%-ով կամ 754,791 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերից ստացված տոկոսային եկամուտների աճով՝ 655,701 հազ. ՀՀ դրամ կամ 8.2%: Չնայած հաճախորդներին տրված վարկերի նվազմանը հաճախորդներին տրված վարկերից ստացված տոկոսային եկամուտները աճել են, քանի որ վարկային պերտֆելը նվազել է հիմնականում 2016 թվականի վերջում և 2016 թվականին միջին ամսական պորտֆելը ավելի մեծ է քան 2015 թվականին: Ինչպես նաև Կազմակերպությունը վերանայել է տրամադրվող վարկերի գնային կառուցվածքը, ինչի արդյունքում արագացել է տոկոսային եկամտի գեներացումը 2016 թվականի ընթացքում:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 2,762,455 հազ. ՀՀ դրամ՝ նվազելով 7%-ով կամ 203,234 հազ. ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է փոխառու միջոցներից տոկոսային ծախսի նվազմամբ՝ 172,930 հազ. ՀՀ դրամ կամ 7.2%

Տոկոսային և նմանատիպ ծախսերի նվազմանը նպաստել են հետևյալ գործոնները.

- 2016 թվականի ընթացքում նախկինում բարձր տոկոսադրույքով ներգրաված փոխառու միջոցների գծով կատարվել են մասնակի մարումներ և դրանք փոխարինվել են ավելի ցածր տոկոսադրույք ունեցող փոխառու միջոցներով:
- 2016 թվականի ընթացքում փոխվել է փոխառու միջոցների արժույթային կառուցվածքը. ԱՄՆ դոլարով ներգրաված միջոցների տեսակարար կշիռը 67%-ից դարձել է 82%, որոնք ունեն ավելի ցածր տոկոսադրույք, քան ՀՀ դրամով ներգրաված միջոցները:
- 2016 թվականի ընթացքում իրականացվել է ավելի խիստ և արդյունավետ իրացվելիության կառավարում:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի նվազման և Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճի արդյունքում 2016 թվականին ավելացել են Կազմակերպության կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները 958,025 հազ. ՀՀ դրամով կամ 18.7%-ով:

Վարկերի արժեզրկումից կորուստների գծով ծախսը աճել է 541,518 հազ. ՀՀ դրամով, կամ 71.4%-ով: Վարկերի արժեզրկումից կորուստների գծով ծախսի զգալի աճը պայմանավորված է վատորակ պորտֆելի դուրսգրումով և պահուստավորման դրույքաչափերի խստացմամբ:

Գործառնական ծախսերը նվազել են 226,063 հազ. ՀՀ դրամով կամ 5.2%-ով, ինչը ծախսերի կրճատման և գործընթացների արդյունավետության բարձրացման մի շարք միջոցառումների արդյունք է:

**Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Կազմակերպության եկամուտների և ծախսերի դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով**

Հազար ՀՀ դրամ	2016թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային եկամուտ	8,845,784	8,090,993
Տոկոսային ծախս	-2,762,455	-2,965,689
<b>Զուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով ծախսը</b>	<b>6,083,329</b>	<b>5,125,304</b>
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	-1,299,757	-758,339
<b>Զուտ տոկոսային եկամուտ</b>	<b>4,783,572</b>	<b>4,366,965</b>
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր	-57,814	-60,759
Զուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	-10,461	21,940
Զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	112,565	85,638
Այլ եկամուտ	54,165	24,485

<b>Զուտ ոչ տոկոսային եկամուտ</b>	<b>98,455</b>	<b>71,304</b>
<b>Գործառնական եկամուտ</b>	<b>4,882,027</b>	<b>4,438,269</b>
Անձնակազմի գծով ծախսեր	-2,121,501	-2,322,457
Մաշվածություն և ամորտիզացիա	-192,522	-197,415
Այլ գործառնական ծախսեր	-1,819,389	-1,839,603
<b>Ընդամենը գործառնական ծախսեր</b>	<b>-4,133,412</b>	<b>-4,359,475</b>
<b>Շահույթ՝ մինչև շահութահարկը</b>	<b>748,615</b>	<b>78,794</b>
Շահութահարկի գծով ծախս	-156,526	-33,731
<b>Տարվա զուտ շահույթ</b>	<b>592,089</b>	<b>45,063</b>

## Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

### *Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ*

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 592,089 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

*Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 9.79%,*

*Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 1.94%:*

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 1,207 ՀՀ դրամ:

Կազմակերպության մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 13,360 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 11.07:

2016 թվականին 2015 թվականի 45,063 հազ. ՀՀ դրամ շահույթից շահաբաժիններ չեն վճարվել:

## Ներքին հսկողության համակարգ

Ներքին հսկողության համակարգը կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, կազմակերպությունում գործում են Ներքին հսկողության, Վարկային ռիսկերի կառավարման և Ներքին աուդիտի ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներքին հսկողության բաժնի խնդիրն է համոզվել, որ կազմակերպությունում ստեղծված ներքին հսկողության համակարգն իրականում արդյունավետ գործում է: Վարկային ռիսկերի կառավարման բաժնի գործառույթն է ուժեղացնել ներքին հսկողության համակարգը վարկավորման գործընթացներում: Ներքին աուդիտի բաժնի խնդիրն է բացահայտել կազմակերպության նպատակների իրագործմանը

խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

## **Կազմակերպության աշխատակիցները**

Նվիրված աշխատակազմը Կազմակերպության ամենամեծ ձեռքբերումն է, Կազմակերպության ներկայիս հաջողության և հետագա զարգացման գրավականը: Կազմակերպությունը հմուտ մասնագետներից կազմված թիմ է, որը համախմբված է մեկ ընդհանուր նպատակի շուրջ և ծառայում է կազմակերպության առաքելությանը: Կազմակերպությունը առավել քան կարևորվում է ընդունված արժեքային համակարգի չափանիշների, միջանձնային դրական հարաբերությունների պահպանումը, ջերմ մթնոլորտը, թափանցիկությունը և, ընդհանուր առմամբ, կորպորատիվ մշակույթը, ինչը ստեղծվել է աշխատակիցների ջանքերի շնորհիվ:

Կարճ ժամանակահատվածում Կազմակերպությանը հաջողվել է դառնալ Հայաստանի Հանրապետության առաջատար վարկային կազմակերպություններից մեկը: 2016թ.-ին Կազմակերպությունը Գելլափի ինթերնեյշնլի կողմից իրականացված հարցումների արդյունքում 4-րդ անգամ անընդմեջ ճանաչվեց Հայաստանի Հանրապետության լավագույն վարկային կազմակերպություն: Այս իրադարձությունը ևս մեկ անգամ մատնանշեց աշխատակիցների տարիների անմնացորդ աշխատանքի արդյունավետությունը: 2016թ.-ին Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 589 մարդ:

Աշխատանքների արդյունավետ կառավարմանն ու աշխատակիցների զարգացմանը մեծապես նպաստում են ներքին վերապատրաստումները՝ միտված զարգացնելու ֆինանսական տեղեկացվածությունը, հաղորդակցման և բանակցելու ունակությունները, ծանոթացնելու նոր պրոդուկտների և ծառայությունների մանրամասնություններին, ինչպես նաև ապահովելու հաճախորդամետ մոտեցում և դրական միջանձնային հարաբերություններ կազմակերպության ներսում:

Յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություն է տրվում զարգացնելու թե՛ մասնագիտական և թե՛ անձնային հատկանիշները, ինչպես նաև ունենալու մասնագիտական առաջխաղացում Կազմակերպության ներսում: 2016թ. մեկնարկեց «Աշխատակիցների զարգացման ծրագիրը»-ը, որի նպատակն է ընտրել և զարգացնել առավել մեծ ներուժ ունեցող աշխատակիցներին, ովքեր հնարավորություն կունենան մասնակցել ՖԻՆՔԱ Զարգացման Ակադեմիայի ծրագրերին և հատուկ նախագծերի, ինչպես նաև հանդես գալ որպես ուղղորդող նոր ընդունված աշխատակիցների համար:

Աշխատակիցների համար պարբերաբար մշակվում են արտոնությունների ծրագիր և ստեղծվում առաջխաղացման հնարավորություններ: Ի լրումն բժշկական ապահովագրությանը, կյանքի նշանակալի իրադարձությունների համար տրվող պարգևավճարներին, 2016թ.-ին ներդրվել է աշխատակիցների համար տրամադրվող արտոնյալ պայմաններով վարկային փաթեթ:

Տարեկան երկու անգամ իրականացվում են աշխատակիցների գնահատման միջոցառումներ, որոնք օգնում են հստակ և թափանցիկ տեղեկության հիման վրա գնահատել աշխատակցի ունակությունները և զարգացնել թույլ կողմերը:



Այս բոլոր գործընթացների արդյունքում աշխատակիցները դարձել են էլ ավելի պատրաստակամ և ճկուն՝ դիմավորելու նոր մարտահրավերներ և իրականացնելու արդյունավետ նորամուծություններ:

### Տարածքային գործունեություն

Կազմակերպությունը, մշտապես առաջնորդվելով իր հաճախորդի կողքին լինելու, խորհրդատվություն տրամադրելու, արդյունավետ և օպտիմալ լուծումներ առաջարկելու, գործունեության աշխարհագրության շարունակական ընդլայնման և զարգացման քաղաքականությամբ, 2016 թվականի ընթացքում շարունակեց իր մասնաճյուղային ցանցի ընդլայնման քաղաքականությունը, բացելով նոր մասնաճյուղ Գավառ քաղաքում: Կազմակերպության մասնաճյուղերը տեղակայված են ՀՀ բոլոր 11 մարզերում և 2016 թվականի վերջի դրությամբ դրանց թիվը կազմում է 37:

Կազմակերպությունը մշտապես իրականացնում է կադրերի որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, մասնաճյուղերի կապիտալ վերանորոգմանը և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ իր բոլոր մասնաճյուղերում:

### Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2016 թվական	2015 թվական
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	592,089	45,063
Սեփական կապիտալի միջին մեծություն	6,047,283	5,812,287
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	9.79	0.78
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	592,089	45,063
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	30,569,551	29,291,518
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.94	0.15
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	592,089	45,063
Գործառնական եկամուտ	4,882,027	4,438,269
Զուտ շահույթի մարժա (NPM), %	12.13	1.02
Գործառնական եկամուտ	4,882,027	4,438,269
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	30,569,551	29,291,518
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	15.97	15.15
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	30,569,551	29,291,518
Սեփական կապիտալի միջին մեծություն	6,047,283	5,812,287
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.06	5.04
Զուտ տոկոսային եկամուտ	6,083,329	5,125,304
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	28,624,105	27,309,609
Զուտ տոկոսային մարժա (NIM)	21.25	18.77
Տոկոսային եկամուտ	8,845,784	8,090,993

Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	28,624,105	27,309,609
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	30.90	29.63
Տոկոսային ծախսեր	2,762,455	2,965,689
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	24,051,105	23,028,846
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	11.49	12.88
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	592,089	45,063
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	490,596.00	490,596.00
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	1,206.88	91.85
Սպրեդ, %	19.42	16.75

## Կազմակերպության հետագա զարգացման նկարագիրը

Կազմակերպության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- վարկային պորտֆելի որակի բարելավում, հաճախորդների վարկունակության գնահատման բարելավման և պատասխանատու ֆինանսավորում իրականացնելու միջոցով,
- հաճախորդների դրական փորձառություն ապահովելու միջոցով հաճախորդների պահպանման ցուցանիշի բարելավում, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավում,
- ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, ֆինանսավորող կազմակերպությունների ցանցի ընդլայնում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- գործարար գործընթացների օպտիմալացում՝ պահպանելով գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակ,
- աշխատակիցների որակավորման բարձրացում ներկազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով,
- Միկրոֆինանսավորման ոլորտում մրցակցային դիրքի բարելավում, նորարարական վարկատեսակների մշակում և ներդրում:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Կազմակերպության առջև դրված նպատակներով և միտված են բարելավել գործունեության ինչպես որակական բնութագրիչները, այնպես էլ ֆինանսական ցուցանիշները:

Հեռանկարային զարգացման ուղղությունները ապահովելու նպատակով Կազմակերպությունը պատրաստվում է ձեռնարկել հետևյալը.

- «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»-ի ստացում «Smart Campaign»-ից, ինչը կհավաստի, որ Կազմակերպությունը հետևում է և համապատասխանում է միկրոֆինանսավորման ոլորտում միջազգայնորեն ճանաչված հաճախորդների պաշտպանության սկզբունքներին:
- 2016 թվականին մեկնարկած «հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի» ներդրման նախագծի ավարտ, ինչը կնպաստի հաճախորդների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրմանը և հավաքագրված տեղեկատվության մշակման միջոցով նրանց կարիքների բացահայտմանը: Այս համակարգը նաև հնարավորություն կտա ունենալ վարկային որոշումների ավտոմատ կայացման գործիք:

- Պլանշետային համակարգիչների միջոցով վարկավորման գործընթացի սկզբնական փուլերի մասնաճյուղերից դուրս իրականացում (tablet banking), ինչը ուղղված է վարկավորման գործընթացի օպտիմալացմանը և հաճախորդի փորձառության բարելավմանը,